# ՇՈՒՇԻ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆՕՐՐԱՆ

«Շուշին ով տիրի, Ղարաբաղը նրանն է»: Այս միտքը հաճախ հոլովվել և երկսայր սուր դարձել թշնամու ձեռքին:

Երկար տասնամյակներ Շուշին քոչվորների ձեռքին էր, բայց Ղարաբաղը երբեք նրանցը չեղավ: Ամբողջ երկրամասը միշտ էլ պատերազմական թատերաբեմ է եղել:

Րաֆֆին այսպես է ներկայացնում այդ պատմությունը:

Վարանդայի Մելիք Շահնազար առաջինի թուրք կնոջից ծնված Շահնազար որդին գիշերը սպանում է մելիքության օրինական ժառանգ եղբորը (ծնված հայ կնոջից) և նրա ընտանիքի անդամներին, տիրանում է մելիքության գահին: Ղարաբաղի մյուս մելիքները միաբանվում են անօրենին պատժելու համար: Մելիք Շահնազար Երկրորդը (այդպես էր հորջորջվում դավաճանը) օգնության է հրավիրում քոչվորական ցեղի առաջնորդ Փանահ Ալիին: Վերջինս, որ Լեոյի վկայությամբ Ջիվանշիրի ցեղից էր, չկարողանալով ներխուժել Ղարաբաղ, մնացել էր Աղդամի մոտ Շահբուլաղ կոչվող վայրում: Շահնազար Երկրորդը Փանահին հրավիրում է իր մոտ և նրան նվիրում Շոշ բերդը (Շուշին): Դա 18-րդ դարի կեսերին էր: Փանահի որդի Իբրահիմ խանը Շուշին իր ձեռքում պահելու համար ռուսական կողմնորոշում ընդունեց, հետո դավաճանեց և 1806 թվականին ռուս զինվորների ձեռքով սպանվեց Շոշ գյուղի մոտ: Գրեթե նման ճակատագիր ունեցավ նաև նրա ժառանգորդը Մեհդի Ղուլի խանը:



Դրանով էլ ավարտվեց նրանց տիրապետությունը Շուշիում: Ղարաբաղի մյուս Դիզակի, Խաչենի, Ջրաբերդի և Գյուլիստանի մելիքները միշտ պատերազմում էին Շուշիի խաների դեմ: Ով ենթարկվում էր Շուշիի խանին, պատժվում էր որպես դավաճան: Եվ խարդավանքներ եղան, և դավաճանություն ու կոտորածներ, և բռնագաղթ, բայց երբեք Ղարաբաղը չհպատակվեց ջիվանշիրյան խաներին: Իսկ թե ովքեր են ադրբեջանցիների նախնիները՝ այդ ջիվանշիրցինե՞րը, աղվաննե՞րը, կովկասյան թաթարնե՞րը, Իրանի ադրբեջանցինե՞րը, թե՞ թուրքերը: Թող իրենք որոշեն:

1805 թվականից Ղարաբաղը Ռուսաստանի տիրապետության տակ էր, սակայն Շուշիի բուռն զարգացումն սկսվեց 1826 թվականից: Հենց իրենք ադրբեջանցիները քաղաքն անվանում էին «Հայկական Կարթագեն»: Իսկ երբ այստեղ սկսեցին ծաղկել հայ ճարտարապետությունը, հայ մշակույթը, զարգացան արհեստները ու առևտուրը, անվանում էին նաև «Անդրկովկասի Փարիզ»:

Թե ինչ տեղի ունեցավ հետո, բոլորս գիտենք: 20-րդ դարում այդ քաղաքի և նրա բնակիչների նկատմամբ գազանությունները ստացան իրենց արժանի պատասխանը 92-ի մայիսի 9-ին: Բողոքելու և օտարներին սեփական դարդերը պատմելու ժամանակն անցել է: Այսօր կռվելու և հայկական հողը պահելու ժամանակն է:

ՍԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ